ՀՀ ԱԻՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ԱԿԱԴԵՄԻԱ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2018

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ
ԱՐՁ. N 4, ԿԱՅԱՑԱԾ 16.11.2018Թ.
ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՌԵԿՏՈՐ՝
_____ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի (այսուհետ՝ Ակադեմիա) ակադեմիական ազնվության սկզբունքները, չափանիշները, ակադեմիական անազնվության դրսևորումները և դրանց կանխարգելման կարգը:

1.2. Կանոնակարգը մշակված է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության հիմնադրման մասին կոնվեցիայի 2-րդ հոդվածի (14.07.1967թ.), Մտավոր սեփականության բնագավառում իրավախախտումները կանխելու նպատակով համագործակցության մասին համաձայնագրի (20.07.1999թ.), ՀՀ Սահմանադրության, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 10-րդ բաժնով, Քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածով, Մաքսային օրենսգրքի 14-րդ բաժնով, «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» 2006թ. ՀՀ օրենքով, Ակադեմիայի կանոնադրության և ներքին կարգապահական կանոնների հիման վրա:

1.3. Ակադեմիական ազնվությունը սահմանվում է որպես հինգ հիմնարար արժեքների՝ ***ազնվության, վստահության, անկեղծության, հարգանքի և պատասխանատվության պահպանման պարտավորությունն***՝ անկախ իրավիճակից:

1.4. Ակադեմիական անազնվությունն ակադեմիական միջավայրի անմիջական շահառուների կողմից այնպիսի վարքագծերի դրսևորում է, որը նվազեցնում է ակադեմիական համակարգի արդյունավետությունը և հասարակության մեջ նրա նկատմամբ վստահությունը:

1.5. Ակադեմիական ազնվությունն անհրաժեշտ է Ակադեմիայի առաքելության և հիմնական նպատակների արդյունավետ իրականացման, ազնիվ և փոխադարձ վստահության միջավայրի ձևավորման և որակյալ կրթական ծառայությունների տրամադրման համար:

1.6. Ակադեմիական համակազմի ցանկացած անդամ պատասխանատվություն է կրում ազնիվ միջավայր ստեղծելու և պահպանելու համար ու պետք է նպաստի Ակադեմիայի բարգավաճմանը և պահպանի ակադեմիական ազնվության սկզբունքները:

II. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ

2.1. Ակադեմիական ազնվություն նշանակում է կատարել ակադեմիական բոլոր աշխատանքներն առանց գրագողության, խաբեության, ստելու, խարդախության, գողության, առանց ստանալու այլ անձանցից արգելված օգնություն կամ օգտվելու տեղեկատվության ցանկացած աղբյուրից, որը հանրամատչելի չէ:

2.2. Ակադեմիական ազնվություն է համարվում՝

- քննական աշխատանքների անցկացման ընթացքում ազնիվ և պատշաճ պահվածքը,
- գիտական և հետազոտական աշխատանքներում մտքերի, գաղափարների իրական հեղինակներին հղումներ կատարելը,
- իրական (ոչ կեղծ) հետազոտական արդյունքներով հիմնավորված աշխատանքի ստեղծումը,
- մտավոր սեփականության բոլոր տեսակների պաշտպանու-

թյունը:

2.3. Ուսանողները պետք է գիտակցեն իրենց հանձնարարված պատասխանատվությունը և խստորեն հետևեն կարգապահական կանոններին և հրահանգներին ուսումնառության ամբողջ ընթացքում:

2.4. Աշխատանքների ղեկավարները կամ գիտելիքների ստուգումն անցկացնող պրոֆսորադասախոսական կազմն իր հերթին պետք է ներկայացնեի գործընթացի համար անհրաժեշտ կանոնները:

Ուսանողների ուշադրությունը հրավիրեն այն փաստին, որ դրանց պահանջների չկատարումն ակադեմիական ազնվության սկզբունքների խախտում է:

III. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՆԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ

3.1. Ակադեմիական անազնվություն նշանակում է դիտավորյալ կերպով այլ անձի փոխարեն կատարել կամ փորձել կատարել կամ օգնել այլ անձին կատարելու ցանկացած ակադեմիական աշխատանք, որը չի համապատասխանում ակադեմիական ազնվության սկզբունքներին:

3.2. Ակադեմիական անազնվություն է համարվում՝

3.2.1. գրագողությունը՝

- ուրիշի ստեղծագործությունը որպես սեփական ներկայացնելն է, կամ ուրիշի ստեղծագործության անօրինական հրապարակումն իր անվամբ, այլ կերպ հեղինակային իրավունքի յուրացումը,
- այլոց գաղափարները, հետազոտությունները և մտավոր աշխատանքները սեփականացնելը և որպես ինքնուրույն

աշխատանք ներկայացնելը,

- այլ հեղինակների գաղափարների, հետազոտությունների, ուսումնասիրությունների և մտավոր աշխատանքների մասնակի յուրացումը,
- որևէ աշխատանքի՝ առանց իրական հեղինակին և աղբյուրը նշելու մասնակի կամ ամբողջական ընդօրինակումը զանազան աղբյուրներից, ինչպիսիք են՝ համացանցը, հոդվածները, գրքերը, ամսագրերը և այլն,
- որևէ ինտերնետային կայքից արտագրելը,
- գրքից, թերթից կամ ամսագրից հոդված արտագրելը,
- օգտագործված աղբյուրների և գրականության ցանկի՝ ակնհայտ խախտումներով ձևավորումը, սխալ հղումներ կատարելը, երբ ուսանողն իր աշխատանքում «Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ»-ի հետ ինքն անձամբ չի ծանոթացել և աշխատանքում դրան հղում չի արվել: Այդ ցանկում պետք է ներկայացվեն միայն աշխատանքում օգտագործված աղբյուրները: Իսկ այն աղբյուրները, որոնք աշխատանքի հեղինակի համար եղել են ներշնչանքի աղբյուր կամ նրա հայացքները ձևավորվել են դրանց ազդեցությամբ, պետք է ներկայացվեն օգտագործված աղբյուրների ցուցակից առանձին ցուցակով, օրինակ՝ «Թեմատիկ գրականություն» վերնագրի տակ,
- գնել (կամ այլ կերպով ձեռք բերել) այլ անձի կողմից կատարած աշխատանք կամ այլ առաջադրանք և ներկայացնել որպես ինքնուրույն աշխատանք,
- կրկնել վիճակագրական կամ դեմոգրաֆիական տեղեկությունները, որոնք հանրամատչելի չեն և սկզբնապես կազմվել են այլ անձի կողմից:

3.2.2. համաձայնությունը՝

- աշխատանքի անբարեխիղճ կատարմանն աջակցելը,
- թեստային աշխատանքի, քննության կամ այլ տիպի աշխատանքների՝ ակնարկ, ռեֆերատ, լաբորատոր ու գործնական աշխատանք, ուրիշի փոխարեն կատարելը կամ ուրիշի աշխատանքի հանձնելը սեփականի փոխարեն,
- գնահատական ստանալու շուրջ համաձայնությունն ուսանողի և դասախոսի միջև,
- գնահատական ստանալու նպատակով դասախոսին միջնորդելը (օրինակ ղեկավարի, գործընկերոջ, դասախոսի, աշխատակցի և այլոց միջոցով),

3.2.3. բազմապատճենումը՝

- նույն աշխատանքը որպես տարբեր առաջադրանքներ կամ տարբեր վերնագրերով ներկայացնելը,
- միևնույն աշխատանքը տարբեր տիպի գնահատումների համար ներկայացնելը, այդ թվում՝ որևէ աշխատանքի, որը երբևէ արդեն գնահատված կամ ներկայացված է եղել, այն հենց հեղինակինն է և գրագողություն չի ենթադրում:

3.2.4. կեղծումը՝

- գնահատականների կամ պատասխանների կեղծում՝ այլ գնահատական ստանալու նպատակով,
- ակադեմիական գրառումների և/կամ այլ փաստաթղթերի կեղծում՝ ակադեմիական շահ ստանալու նպատակով,
- այլ ուսանողի կամ ակադեմիական աշխատանքի կեղծում,
- այլ ուսանողի ակադեմիական աշխատանքի վնասում,
- արգելված նյութերի կամ էլեկտրոնային հարմարանքների կիրառում գիտելիքների ստուգման ընթացքում,
- քննության ժամանակ քննական հարցերի պատասխանների

տրամադրում այլ ուսանողների,

- ցանկացած լաբորատոր կամ փորձնական աշխատանքի արդյունքերը կամ ցանկացած տվյալներ և տեղեկություններ-ի կեղծում,
- ցանկացած ակադեմիական աշխատանք այն ներկայաց-նելուց հետո, բացառությամբ այն դեպքերի, եթե նման փո-փոխությունները մտնում են առաջադրանքի պահանջների մեջ (ինչպիսիք են' դասախոսի գիտությամբ վերանայում տվյալ ակադեմիական աշխատանքը) փոփոխում,
- գնահատականների, լաբորատոր, գործնական կամ հաճա-խելիության գրանցումների փոփոխում,
- համակարգչային սարքավորումների (այդ թվում՝ սկավա-ռակները) վնասում կամ լաբորատոր սարքավորումների ակադեմիական աշխատանքի գնահատումը փոփոխելու կամ կանխելու համար, օգտվել այլ անձին պատկանող համակարգչային նշանաբառից, ինտերնետային կայքի բո-վանդակության կամ մատչելիության վնասում, այլ անձի փոխարեն՝ համակարգչային ռեսուրսներ ձեռքբերելու նպա-տակով գործելու փորձ,
- չկատարման դեպքում կեղծ պատճառաբանությունների բերում (նախօրոք կամ փաստից հետո, օրինակ՛ քննությանը չներկայանալու կամ ակադեմիական աշխատանքը չներկա-յացնելու համար դասախոսին կամ Ակադեմիայի համապատասխան պաշտոնական աշխատակցին կեղծ պատճառաբանություններ և փաստաթղթեր տալը):

3.2.5. արգելված աջակցությունը՛

- դասախոսի կողմից արգելված աջակցություն տրամադրել կամ ստանալ ցանկացած քննության կամ այլ ակադե-

միական աշխատանքի վերաբերյալ: Քննությունների, ստուգարքների, լաբորատոր ու գործնական աշխատանքների և նմանատիպ գործողությունների ժամանակ ուսանողները պետք է տեղյակ լինեն, որ ցանկացած աջակցություն (ինչպիսիք են գրքեր, գրառումներ, հաշվիչներ և այլ անձանց հետ խոսակցություններ) արգելված է՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այն հատուկ թույլատրված է դասախոսի կողմից,

- արտագրել կամ թույլատրել այլ անձանց արտագրել քննությունների պատասխանները,
- քննության ժամանակ փոխանցել կամ ստանալ տեղեկություններ, որոնք վերաբերում են տվյալ քննվող նյութերի մեջ ընդգրկված նյութերին (այդ թվում՝ փոխանցումը կարող է կատարվել բանավոր, գրավոր, նշանների կամ էլեկտրոնային ազդանշանների օգնությամբ կամ այլ կերպ),
- տալ կամ ստանալ ավելի ուշ ժամկետների համար նշանակված քննությունների պատասխանները,
- այլ անձի փոխարեն լրացնել կամ թույլատրել այլ անձին
- ուսանողի փոխարեն լրացնել ամբողջ առաջադրանքը կամ դրա մեկ մասը (ինչպիսիք են աշխատանք, վարժություն, ինքնուրույն աշխատանք, ներկայացում, փորձ կամ հաշվարկ),
- ներկայացնել խմբային աշխատանք կամ թույլատրել, որպեսզի աշխատանքը ներկայացվի, երբ խմբի անդամներից ոչ բոլորն են մասնակցել աշխատանքի պատրաստմանը կամ կատարմանը,
- ծրագրավորող հաշվիչի կամ այլ էլեկտրոնային սարքի արգելված կիրառում:

3.3. Ցանկացած այլ գործողություն, որն անարդարացիորեն առավելություն է տալիս աշխատակցին կամ ուսանողին և ազդում նրա արձանագրած արդյունքների վրա:

IV. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՆԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Ֆակուլտետի դեկանը յուրաքանչյուր նոր աշխատակցի կամ ուսանողի ծանոթացնում է սույն կարգի հետ, ներկայացնում ակադեմիական ազնվության չափանիշները և դրանց խախտման հետևանքները, զգուշացնում, որ ակադեմիական անազնվություն դրսևորելը պատժելի է:

4.2. Դեկանը ուսանողներին և աշխատակիցներին ներկայացնում է ակադեմիական անազնվության տարաբնույթ դրսևորումներն ու դրանց բնորոշող վարքային հիմնական դրսևորումները:

4.3. Ուսանողների և աշխատակիցների հետ կնքվող պայմանագրերում ներառվում է առանձին կետ, համաձայն որի նրանք տեղեկացված են ակադեմիական ազնվության սույն կարգի դրույթներին և դրանք խախտելու դեպքում կարող են ենթարկվել պատասխանատվության:

4.4. Համաձայն Ակադեմիայի ներքին կարգապահական կանոնների, ուսանողը հեռացվում է ակադեմիական ազնվության վարքականոնների խախտման, կամ ստուգարքների ընթացքում տեխնիկական միջոցների կիրառման կամ ցանկացած այլ մեթոդով կատարած արտագրության, արտագրության փորձի և սղագրության հայտնաբերման դեպքում՝

քննություն ընդունող դասախոսը դադարեցնում է տվյալ ուսանողի քննությունը, նրան հեռացնում քննասենյակից:

4.5. Քննությունից անմիջապես հետո դասախոսը զեկուցագիր է ներկայացնում դեկանին՝ ուսանողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու և նրան Ակադեմիայից հեռացնելու նպատակով ռեկտորին զեկուցագիր ներկայացնելու համար:

4.6. Պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչների կամ ակադեմիական այլ աշխատակիցների կողմից ակադեմիական ազնվության սկզբունքների խախտման կամ անազնվության դրսևորման դեպքերը քննարկվում են Ակադեմիայի էթիկայի հանձնաժողովում այդ հանձնաժողովում հարցերի քննարկման ընթացակարգով:

V. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն կանոնակարգը հաստատում է Ակադեմիայի գիտական խորհուրդը:

5.2. Կանոնակարգում փոփոխություններ ու լրացումներ կարող են կատարվել Ակադեմիայի գիտական խորհրդի որոշմամբ

- ռեկտորի,
- գիտական խորհրդի անդամների,
- ուսանողական խորհրդի (ակտիվի), որակի կառավարման հանձնաժողովի,
- էթիկայի հանձնաժողովի առաջարկությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I	Ընդհանուր դրույթներ	3
II	Ակադեմիական ազնվություն.....	4
III	Ակադեմիական անազնվություն	5
IV	Ակադեմիական անազնվության կանխարգելման և պատասխանատվության ենթարկման կարգը.....	10
	Կանոնակարգի հաստատման և փոփոխության կարգը.....	11